Կարգապահական գործ թիվ ԿԳ-24166

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԵԼԵՆԱ ՎԱԼԵՐԻԻ ԿԱՍՊԱՐՈՎԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ դիմող Աշոտ Փոլադյանի, փաստաբան Ելենա Կասպարովայի և վերջինիս ներկայացուցիչ՝ փաստաբան Գայանե Գրիգորյանի,

քննության առնելով փաստաբան Ելենա Վալերիի Կասպարովայի **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 1903), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. <u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>

Աշոտ Փոլադյանը **(այսուհետև՝ Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև՝ Պալատ),** հայտնել է, որ ժառանգության վերաբերյալ քաղաքացիական գործով իր փաստաբանն է հանդիսացել Ելենա Կասպարովան **(այսուհետև՝ Փաստաբան**):

Դիմողի դժգոհությունը կայանում է նրանում, որ Փաստաբանի պատճառով 2018թ. սկսած դատական գործը ձգձգվել է:

Դիմողի պնդմամբ, Փաստաբանը տևական ժամանակ չի պատասխանել զանգերին, ինչից հետո միակողմանի լուծել է պայմանագիրը՝ չտրամադրելով փաստաթղթերի մի մասը և վճարված գումարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել:

Դիմողը հայտնել է, որ 2024թ. ապրիլ ամսին փոստային առաքման եղանակով ստացել է հանձնման-ընդունման ակտ, որը իր կողմից չի ստորագրվել: Ըստ Դիմողի՝ հենց այդ ժամանակ էլ նա վերջնական տեղեկացել է Փաստաբանի կողմից թույլ տված խախտումների մասին:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Թիվ ԿԳ-24166-2-Ա
11.12.2024թ.

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 18.10.2024 թվականին Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողը լրացուցիչ դիրքորոշում կամ ապացույց չի ներկայացրել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Ելենա Կասպարովային առաջարկվել է Օրենքի 39.2-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն ներկայացնել բացատրություն Աշոտ Փոլադյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 05.08.2024թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ 17.05.2018թ. Դիմողի հետ կնքել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր **(այսուհետև՝ Պայմանագիր)** համաձայն որի՝ Փաստաբանը պարտավորվել է ներկայացնել Դիմողի շահերը թիվ ԵԴ/1733/02/18 քաղաքացիական գործի շրջանակներում, ինչի կապակցությամբ Դիմողի կողմից վճարվել է 250.000 ՀՀ դրամ:

Փաստաբանի պնդմամբ, նա մասնակցել է տասնյակ դատական նիստերի և նշված գործի շրջանակներում իրականացվել է երեք փորձաքննություն, ինչն ազդել է գործի քննության տևողության վրա: Բացի այդ, դատական գործը վերամակագրվել է դատավոր Կիմա Արզումանյանին, քանի որ գործով նախկին դատավորի լիազորությունները դադարեցվել էին:

Փաստաբանը հայտնել է, որ 2023թ. հրավիրել է Դիմողին, որպեսզի վերջինս ստորագրի նոր լիազորագիր, սակայն նա տեղեկացրել է, որ ունի նոր փաստաբան:

Փաստաբանը նշել է, որ 29.12.2023թ. պայմանագիրը լուծելու վերաբերյալ ակտը և փաստաթղթերը փոստային առաքմամբ ուղարկել է Դիմողին, սակայն փաթեթը վերադարձվել է, քանի որ Դիմողը հրաժարվել է ընդունել այն: Այն ժամանակ, երբ Փաստաբանը տեղեկացել է, որ Դիմողը մտադիր չէ ստանալու կամ ինքնուրույն վերցնելու փաթեթը, 03.04.2024թ. գործի նյութերը և հանձնման-ընդունման ակտը փոստային առաքմամբ ուղարկել է Դիմողին:

Ինչ վերաբերում է փաթեթի ամբողջականության հարցին, ապա Փաստաբանը նշել է, որ իր մոտ առկա բոլոր նյութերն ուղարկել է Դիմողին, իսկ եթե վերջինս գտնում է հակառակը, ապա կարող է որպես դատավարության մասնակից պահանջել փաստաթղթերը դատարանից:

Փաստաբանը նշել է, որ գումարի վերադարձման մասին խոսք չի կարող գնալ, քանի որ քաղաքացիական գործն ընթանում է սկսած 2018թ. և վճարված 250.000 ՀՀ դրամ գումարը մի կերպ բավարարել է ճանապարհածախսը և փաստաթղթերը կազմելու և դատարան ներկայացնելու ծախսը:

Վերոգրյալի հաշվառմամբ, Փաստաբանը խնդրել է մերժել կարգապահական վարույթի հարուցումը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով 21.10.2024 թվականին Փաստաբանին առաջարկվել է Օրենքի 39.5 հոդվածի 4-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը բացատրությամբ հայտնել է, որ համաձայն 17.05.2018թ. պայմանագրի ստանձնել է Դիմողի իրավունքների պաշտպանությունը ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող գույքի բաժնի առանձնացման պահանջի վերաբերյալ քաղաքացիական գործի շրջանակներում: Նշված գործով Դիմողի հանդիսացել է պատասխանող:

Փաստաբանը նշել է, որ գործը ստանձնելուն պես դիմում է ներկայացրել դատարան գործի նյութերին ծանոթանալու համար, ինչից հետո Փաստաբանը ներկայացրել է հայցադիմումի պատասխան: Փաստաբանը մասնակցել է դատական նիստերին, ներկայացրել է անհրաժեշտ առարկություններ, դիրքորոշումներ, փորձաքննության միջնորդություններ:

Փաստաբանը հայտնել է, որ Դիմողի ցանկությամբ և խնդրանքով երկու անգամ կազմվել հաշտության համաձայնագիր, սակայն վերջինս հրաժարվել է վեճը հաշտությամբ լուծելու գաղափարից:

Ըստ Փաստաբանի՝ անշարժ գույքի նկատմամբ Դիմողի կատարած բարելավումների մասով Փաստաբանը ձեռք է բերել եզրակացություն, որի հիման վրա կազմել հակընդդեմ հայց, սակայն այն դատարան չի ներկայացվել, քանի որ Դիմողը հրաժարվել է պետական տուրք վճարել: Այնուհետև, 17.05.2021թ. լիազորագրի ժամկետը լրացել է, ինչի պատճառով էլ Փաստաբանը զրկված եղել դատարաններում և պետական մարմիններում Դիմողին ներկայացնելու իրավունքից: Ըստ այդմ, Աշոտ Փոլադյանը դիմել է այլ փաստաբանի:

Փաստաբանը նշել է, որ պայմանագրի լուծման ժամանակ որևէ գումար հետ չի վերադարձրել, քանի որ պայմանագրով նախատեսված գումարը կազմել է ընդամենը 250.000 ՀՀ դրամ և Փաստաբանի պնդմամբ, նա բոլոր պարտականությունները պատշաճ կատարել է:

Ըստ Փաստաբանի՝ նա մշտապես կապի մեջ է գտնվել թ՛ե Դիմողի հետ, թ՛ե նրա կնոջ և թ՛ե որդու հետ: Ինչ վերաբերում է Դիմողի կողմից ներկայացրած ապացույցներին, որ Փաստաբանը զանգերին չի պատասխանել, ապա Փաստաբանը հայտնել է, որ 23.12.2024թ. դրությամբ պայմանագիրը եղել է լուծված: Փաստաբանը նշել է, որ Դիմողը դիտմամբ չի ստացել պայմանագրի լուծման ակտը, իսկ 19.02.2024թ. հաղորդագրություն է ուղարկել՝ տեղեկացնելով, որ անհրաժեշտություն չկա գործի նյութերը ուղարկելու և նա կգնա և կվերցնի դրանք:

Փաստաբանը նշել է, որ լիազորագրի ավարտման ժամանակ Դիմողն իրեն հայտնել է, որ ունի նոր փաստաբան:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 22.08.2024թ. թիվ 344-Ա/ԿԳ-24166 որոշմամբ փաստաբան Ելենա Կասպարովայի նկատմամբ Օրենքի **19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետև նաև՝ Կանոնագիրք) 2.7.2, 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1,3) ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

13.09.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 01.11.2024թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել որոշման 5-րդ գլխի 1-10 կետերով նախատեսված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 01.11.2024թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 11.12.2024թ. ժամը 18:30-ին՝ ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Ելենա Կասպարովան ստանձնել է Դիմող Աշոտ Փոլադյանի իրավունքների պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է կողմերի միջև կնքված թիվ 10/Ծ/18 17.05.2018թ. փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով:*

2. Պայմանագրի 2.1-ին կետի համաձայն՝ Կատարողը իրականացնում է հետևյալ գործառույթները՝ թիվ ԵԴ/1733/02/18 սնանկության գործի շրջանակներում ներկայացնել Պատվիրատուի շահերը: *Նշված փաստը հաստատվում է կողմերի միջև կնքված Պայմանագրով:*

3. Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2.1.կետում նշված պարտավորությունների կատարումը, իսկ պայմանագրի 6.2. կետի համաձայն՝ պայմանագրի գործողության ժամկետը համարվում է այն ժամանակահատվածը, որի ընթացքում իրականացվում են սույն պայմանագրի 2.1. կետով նշված գործառույթները:

4. Պայմանագրի գինը կազմել է 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որը Դիմողի կողմից վճարվել է: *Սույն փաստը հաստատվում է կողմերի միջև կնքված 17.05.2018թ. փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով և կողմերի բացատրությամբ:*

5. Փաստաբանը ընդունել է այն հանգամանքը, որ Դիմողին որևէ գումար չի վերադարձրել: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

6. 17.05.2021թ. լրացել է Դիմողի կողմից Փաստաբանին տրված լիազորագրի ժամկետը: *Նշված փաստը հաստատվում է 11.12.2024թ. կարգապահական նիստի ընթացքում կողմերի կողմից տրված բացատրություններով:*

7. 17.05.2021թ. հետո Փաստաբանը թիվ ԵԴ/1733/02/18 գործի շրջանակներում չի իրականացրել որևէ գործողություն: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

8. Ըստ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի տվյալների՝ թիվ ԵԴ/1733/02/18 քաղաքացիական գործով 17.05.2021թ. հետո կայացել է տասնմեկ դատական նիստ:

9. Կարգապահական նիստի ընթացքում Դիմողը նշել է, որ Փաստաբանը իրեն չի վերադարձրել ժառանգության վկայականը:

10. Կողմերն ընդունել են, որ Փաստաբանը ցանկացել է իր մոտ գտնվող բոլոր փաստաթղթերը ուղարկել Դիմողին, սակայն Դիմողը նշել է, որ ինքը կգա և կվերցնի: *Սույն*

փաստը հաստատվում է ինչպես կողմերի բացատրությամբ, այնպես էլ նամակագրության պատճեններով:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Ելենա Կասպարովան փաստաբան է հանդիսանում 25.04.2015թ. թվականից և 2019-2024թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Ելենա Կասպարովայի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1,3) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

7.1. Կանոնագրքի 2.7.2-րդ և 3.5.5-րդ ենթակետերի խախտման մասով Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում արձանագրել.

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Հանձնաժողովը արձանագրում է, որ Փաստաբանի կողմից բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու հանգամանքը քննարկելու համար՝ Դիմողը առնվազն պետք է բացահայտի, թե ինչպես է այն դրսևորվել:

Տվյալ պարագայում Դիմողը նշել է, որ Փաստաբանի պատճառով 2018թ. սկսած դատական գործը ձգձգվել է, որը վերացական բնույթ է կրում: Դիմողը նույնիսկ չի բացահայտել, թե Փաստաբանն ինչպես է ձգձգել դատական գործը: Ավելին, 18.10.2024թ. Աշխատակիցը Դիմողից խնդրել է ներկայացնել ապացույցներ՝ Փաստաբանի կողմից ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարման վերաբերյալ, ինչպես նաև հայտնել տեղեկություն, թե ինչպես է Փաստաբանը ձգձգել դատական գործը, սակայն Դիմողը չի ներկայացրել որևէ ապացույց կամ տեղեկություն:

Սույն պարագայում Հանձնաժողովը հաստատված է համարում, որ Դիմողը չի ներկայացրել որևէ ապացույց, որը կվկայեր Փաստաբանի կողմից վերոնշյալ վարքագծի կատարումը, հետևաբար Հանձնաժողովը Փաստաբանի վարքագիծը չի համարում Կանոնագրքի 2.7.2 և 3.5.5 ենթակետերին հակասող:

7.2. Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 3-րդ պարբերության խախտման մասով Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում արձանագրել.

Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 3-րդ պարբերության համաձայն՝ Պայմանագիրը լուծելիս փաստաբանը՝ ի թիվս այլնի, պարտավոր է նաև վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը (փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):

Նշված կանոնով փաստաբանի համար՝ ի թիվս այլնի, սահմանվում է նաև հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը վստահորդին վերադարձնելու պարտականությունը: Ընդ որում, նշված պարտականության կատարումը պայմանավորվում է միայն պայմանագրի լուծմամբ և չի ենթադրում վստահորդի կողմից լրացուցիչ գործողությունների կատարում, որոնք ուղղված են փաստաբանի կողմից փաստաթղթերը վերադարձնելու պահանջի կատարման ապահովմանը:

Միաժամանակ, չնայած նրան, որ Կանոնագրքի հիշյալ դրույթը Փաստաբանի համար իմպերատիվ կերպով սահմանում է պահանջ՝ գործում առկա փաստաթղթերը վստահորդին վերադարձնելու մասով, այնուամենայնիվ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ գործնականում Փաստաբանն ինքնին չի կարող ապահովել նշված պահանջի կատարումը, եթե վստահորդն իր հերթին չի իրականացնում որևէ գործողություն Փաստաբանից փաստաթղթերը ստանալու ուղղությամբ:

Այսինքն, Փաստաբանը ցանկացած դեպքում պարտավոր է վերադարձնել վստահորդին գործում առկա բոլոր փաստաթղթերը, սակայն վստահորդն իր հերթին պետք է ողջամտորեն իրականացնի որոշակի գործողություններ համապատասխան փաստաթղթերը ստանալու ուղղությամբ, ինչը կարող է դրսևորվել, օրինակ՝ փաստաթղթերի փոխանցման համար նախընտրելի ձևաչափի համաձայնեցված ընտրության մեջ:

Տվյալ դեպքում, բացառապես Դիմողի պնդումն առ այն, որ պայմանագրի լուծումից հետո Փաստաբանը չի վերադարձրել Դիմողին հանձնարարության կատարման ընթացքում հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը ինքնին բավարար չէ Փաստաբանին վերագրվող վարքագծում կարգապահական խախտման հատկանիշների առկայությունը հաստատելու համար:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Դիմողը կարգապահական նիստի ընթացքում նշել է, որ չի պահանջել փաստաթղթերը, իսկ գործում առկա նամակագրություններից, ինչպես նաև ներկայացրած բացատրություններից հետևում է, որ Փաստաբանը ցանկացել է իր մոտ գտնվող

բոլոր փաստաթղթերը ուղարկել Դիմողին, սակայն Դիմողը 19.02.2024թ. նշել է, որ ինքը կգնա և կվերցնի:

Այս համատեքստում, անհրաժեշտ է նկատի ունենալ այն, որ Դիմողը չի ներկայացրել որևէ ապացույց առ այն, որ նա ձեռնարկել է որոշակի միջոցներ փաստաթղթերը ստանալու ուղղությամբ, որպիսի պայմաններում էլ Փաստաբանի համար կստեղծվեին անհրաժեշտ նախադրյալները փաստաթղթերը ուղղակիորեն Դիմողին հանձնվելու համար, իսկ Փաստաբանն իր հերթին 08.04.2024թ. կազմել է հանձնման-ընդունման ակտ, որի շրջանակներում Փաստաբանի կողմից Դիմողին վերադարձվել են գործում առկա բոլոր փաստաթղթերը:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանին վերագրվող վարքագծում ըստ էության բացակայում են Օրենքի և (կամ) Կանոնագրքի պահանջների խախտման հատկանիշները:

Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ *պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:*

Փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերությունների որոշակիությունից և կանխատեսելիությունից ելնելով՝ Կանոնագրքով փաստաբանի համար սահմանվում է պայմանագիրը լուծվելու դեպքում որոշակի գործողությունների կատարմանը հետամուտ լինելու պարտականությունը՝ մասնավորապես, պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, վստահորդին կամ պատվիրատուին վերադարձնելու մասով:

Սույն գործով, Պայմանագրի 2.1-ին կետի համաձայն՝ Կատարողը իրականացնում է հետևյալ գործառույթները՝ թիվ ԵԴ/1733/02/18 սնանկության գործի շրջանակներում ներկայացնել Պատվիրատուի շահերը:

Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ պայմանագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2.1.կետում նշված պարտավորությունների կատարումը:

Պայմանագրի 6.2. կետի համաձայն՝ պայմանագրի **գործողության ժամկետը համարվում է այն ժամանակահատվածը**, որի ընթացքում ***իրականացվում են սույն պայմանագրի 2.1. կետով նշված գործառույթները***:

17.05.2021թ. լրացել է Դիմողի կողմից Փաստաբանին տրված լիազորագրի ժամկետը:

17.05.2021թ. հետո Դիմողը Փաստաբանին չի լիազորել, որպեսզի վերջինս իր շահերը ներկայացնի թիվ ԵԴ/1733/02/18 գործի շրջանակներում:

Ըստ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի տվյալների՝ թիվ ԵԴ/1733/02/18 քաղաքացիական գործով 17.05.2021թ. հետո կայացել է տասնմեկ դատական նիստ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործի քննությամբ, ինչպես նաև վերը նշվածի լույսի ներքո հաստատված է համարում, որ կողմերի միջև կնքված թիվ 10/Ծ/18 17.05.2018թ. փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված պարտավորությունները 17.05.2021թ. պատշաճ կատարմամբ դադարել է:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Հանձնաժողովը արձանագրում է, որ Փաստաբանը կատարել է իր պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ, ուստի՝ Փաստաբանի համար չի առաջացել պարտավորություն՝ Դիմողին վերադարձնել հոնորարի որևէ մաս:

Հանձնաժողովը ընդգծում է նաև, որ կարգապահական նիստի ընթացքում Դիմողը նշել է, որ 2021թ. Փաստաբանի առաջարկել լրացուցիչ գումար, քանի որ լիազորությունները եղել է ավարտված:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանին վերագրվող վարքագծում ըստ էության բացակայում են Օրենքի և (կամ) Կանոնագրքի պահանջների խախտման հատկանիշները:

7.3 Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Վստահորդի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունից բացի վստահորդի փաստաբանի համար սահմանվում են նաև այլ պարտականություններ, որոնք ենթակա են կատարման ինչպես հանձնարարության կատարման ընթացքում, այնպես էլ դրա ավարտին՝ մասնավորապես, տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործի քննությամբ չի ապացուցվել, որ փաստաբան Ելենա Կասպարովան հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես չի տեղեկացրել Դիմողին կամ չի պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Ինչ վերաբերում է գործում առկա նամակագրությանը, հարկ է նշել, որ այն վերաբերում է 2023թ. դեկտեմբեր և 2024թ., իսկ ինչպես արդեն վերևում նշել ենք, կողմերի միջև կնքված թիվ 10/Ծ/18 17.05.2018թ. փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված պարտավորությունները 17.05.2021թ. պատշաճ կատարմամբ դադարել է: Հետևաբար, Փաստաբանը չի ունեցել պարտավորություն պատասխանելու Դիմողին հետաքրքրող հարցերին:

Վերոնշյալ հիմք ընդունելով Հանձնաժողովն արձանագրում է, որ փաստաբանի կողմից Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտում թույլ տալու փաստը չի հաստատվել:

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Ելենա Կասպարովայի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1,3) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ նաև հետևյալ պատճառաբանությամբ.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ուժը կորցրած նորմատիվ իրավական ակտի կամ դրա մասի գործողությունը տարածվում է մինչև դրա ուժը կորցնելու օրը գործող հարաբերությունների վրա, եթե օրենքով կամ ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին նորմատիվ իրավական ակտով այլ բան

նախատեսված չէ:

Այս համատեքստում, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դիմումում նկարագրված փաստական հանգամանքներով, հաստատվում է, որ Դիմողի կողմից բարձրացված հարցերը փաստացի վերաբերում են 2021 թվականի ընթացքում Փաստաբանի կատարված գործողություններին՝ այսինքն համապատասխան իրավահարաբերությունների ծագման պահին փաստացի գործում էր՝ մինչև ««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի հոկտեմբերի 5-ի ՀՕ-366-Ն օրենքի ընդունումը, հին խմբագրությամբ «Փաստաբանության մասին» օրենքը **(այսուհետ՝ իրավահարաբերությունների ծագման պահին գործող խմբագրությամբ «Փաստաբանության մասին» օրենք),** որտեղ ևս կարգավորված են եղել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վաղեմության հետ կապված հարցերը:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար...:

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է՝ ի թիվս այլնի փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Իրավահարաբերությունների ծագման պահին գործող խմբագրությամբ «Փաստաբանության մասին» օրենքի 39.3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո: Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման:

Վերը ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտման դեպքում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը՝ ի թիվս այլ հիմքերի և պայմանների, կարող է հարուցվել բացառապես Օրենքի սահմանված հստակ ու որոշակի վաղեմության ժամկետի պահպանման պարագայում:

Նշված ժամկետն իրենից ներկայացնում է այն ժամանակահատվածը, որի ընթացքում համապատասխան սուբյեկտի (վստահորդը կամ այլ իրավասու անձ) կողմից ներկայացված դիմումում նկարագրված հանգամանքները կարող են քննարկվել կարգապահական վարույթի հարուցման համատեքստում:

Այսպիսով, նույնիսկ անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում՝ այդ թվում նաև հարուցված կարգապահական վարույթի պարագայում, եթե դիմումում նկարագրված հանգամանքների ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերվել է վեց ամիսը լրանալուց և/կամ այդ հիմքը ծագելուց մեկ տարի հետո, ապա կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ հարուցվածը՝ ենթակա է կարճման:

Հարկ է նշել, որ դիմումի, դրան կից նյութերի, ինչպես նաև բացատրության մեջ առկա տեղեկատվության համաձայն՝ 17.05.2021թ. հետո Փաստաբանը թիվ ԵԳ/1733/02/18 գործի շրջանակներում չի իրականացրել որևէ գործողություն, իսկ Դիմողն էլ իր հերթին 2021թ.

տեղեկացված է եղել, որ Փաստաբանը չունի համապատասխան լիազորություն իր շահերը ներկայացնելու համար:

Կարգապահական նիստի ընթացքում Դիմողը նշել է, որ 2023թ. Փաստաբանի հետ կապի մեջ չի եղել, ինչպես նաև հայտնել է, որ 2023թ. տեղեկացված է եղել իր ենթադրյալ իրավունքների խախտման մասին: Այսինքն, այդ պահից Դիմողին հայտնի է եղել Փաստաբանի կողմից ենթադրյալ կատարած խախտման մասին:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը գտնում է, որ եթե նույնիսկ վաղեմության ժամկետի հաշվարկի սկիզբ դիտարկենք Դիմողի կողմից նշված ժամանակահատվածը՝ միևնույնն է Դիմողի կողմից չեն պահպանվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար Օրենքով սահմանված վաղեմության ժամկետները, ուստի նշված հիմքով կարգապահական վարույթը ևս ենթակա է կարճման:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Ելենա Վալերիի Կասպարովայի (արտոնագիր՝ թիվ 1903) նկատմամբ 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2, 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1,3) ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-24166 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-24166-2-Ա
11 դեկտեմբերի 2024թ.
ք.Երևան